

ՄԱՍՆԱԽՈՐ ՊԱՏԻԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. ՆՇԱՆԻ ՎԱՆՈՒՑ ՍԵՐԱՍՏԻՈՑ

ԳԼՈՒԽ ԺԲ.

Յալիսի Դիսոլուբեոն Տեոնի Սիլիոս
գրքի եւ Կարապետ Արհի Սիլիսկոպոսաց եւ
վանս անցիցն որք անցին ընդ այն ժամա-
նակս:

Եւ զկնի վաղճանին Առաքել Անպո.ի
Ակնեցւոյ, ժիարանեալ քանանայից, իշ-
խանաց եւ ժողովրդոց վիճակիս՝ հառն
բերել զԱրքունական հրամանագիր եւ զը-
Պատրիարքական Կոնդակ առաջնորդու-
թեան յԱնուն Սրբոյ Հրեշտակապետի սե-
րոյն առաջնորդ Սերաստացի Նիխապար
Արքեպոս.ի, որ եւ եղևա՛ ի տեղի իւրում
զորդին իւր զԱճառուր վարդապետ, եկն
եւ նստաւ յԱթոռ Տեսչութեան չքնադա-
տիպ վանուց Ս. Նշանիս: Եւ զի էր այր
վեհանձն եւ մեծագործ, ուստի եւ առ
ժամայն ձեռն էարկ զհիւսիսակողմն պա-
րբայի մեհնաստանին եւ իբրեւ 10 կոնդնա-
չափ՝ ի ներքս էաւ ի կալէն, եւ ետ շինել
հաստաւ եւ բարձրագոյն քան զառաջինն,
եւ ի յաւելուածոյ պարսպ ն շինեաց եր-
կուս մեծամեծ սենեակս ի ներքուստ, եւ
ի վերայ նորոյ Առաջնորդարան ինքեան
(ԹՃՂԸ = 1749): Յետ երկոց ամաց եկն ի
քաղաքս Սերաստիս Զառուլ - օղու Մու-
համէտ նախարարն ի Վիտինու (ԹՄԱ =
1752, օգոստոս 8) եւ օպան զՔէնան օղին,
եւ կարի յայտ առաւպիցոյց զիլգա մեր՝
հարկս օսաստիկս եղևա՛ ի վերայ եւ ծանր
տուգանս առեալ: Յայսմ ամի գլխատե-
ցին ի կոստանդնուպոլիս զՍաղապ ա-
ղայն՝ յԱզգէ մերմէ՛ որ էր Ակնեցի եւ
լուծալափոխ Արքայի: Եւ յառաջնւմ
շարաթոյ մեծի պահոց ի 18 փետրուարի
ԹՄԿ = 1764՝ հասեալ զբաւ կենաց Տեսչն
Նիխապարու Արքեպոս.ի փոխեցաւ յանոց
կեսան եւ եղաւ մարմին նորա ի շիրմի
ի վանս Ս. Նշանի՝ հուպ Առաքել Արքե-
պոս.ի Ակնեցւոյ՝ կացեալ յԱթոռ Տեսչու-
թեան Վիճակիս ամս վեց եւ ամիսս ինչ:
Յետ վաղճանի սորա միւսան հաւանու-
թեամբ քանանայից, իշխանաց եւ ժողո-

վորդեան վիճակիս՝ Արքայական հրամա-
նաւ եւ Պատրիարքական Կոնդակաւ նստաւ
յԱթոռ Տեսչութեան նախագիւս՝ ի վանս
Ս. Նշանի՝ կարապետ վարդապետ Ակնեցի՝
որ էր ազգական եւ աշակերտ Տեսչն Առա-
քել Արքեպոս.ի, յառուր Աշխարհամարան
Կիւրսկէի ի 17 Ապրիլի: Եւ եղև զի եկն
օսաստիկ եւ յորդառաւ անձրեւ ի 13 Օգոս-
տոսի եւ եւ ինդեղ ջուրց եւ օղիս ողորդա-
նաց ի բազում տեղիս եւ յօլով միսոս
զործեաց, վասն որոյ եղև սով օսաստիկ
ի Սերաստիս եւ բազում տեղիս՝ մինչ զի
1 քու ցորենն՝ 30, 1 քու գարին 20 եւ
1 քու եփպտացորենն (տարւ) 20 զանե-
կանի վաճառէր եւ ո՛չ էր մարթ դա-
նել, ուստի եւ բազումք մեռան ի սովէն:
Յայսմ սովատանջ ժամանակիս վերերեւ-
ցան բազմաթիւ լէվէնաք աւելի քան եր-
կուս հազար ի կողմանս վիճակիս Սերաս-
տիս՝ որք օփուեալ ի գիւղորէս խաշան-
զանօք կեղեքէին զտղճալիսն եւ անողոր-
մաբար տանջելով պահանջէին ի նոցանէ
զինչո՞ որոց ո՛չ կարացեալ զղէմ ունել
բազմավիշտ տառապանաց փախստական
եղին աստ եւ անդ, ի քաղաքիս եւ ի մե-
ծամեծ գիւղորէս, առ ի ապրեցոցանել
զոնեա՛ զունձինս իւրեանց ի բռնութենէ
նոցա, վասն որոյ ո՛րք սւրբ գառնիւր
շինութիւն, նա՛ եւ քողցեալ եւ ի դառն
աղքատութեան ժամանեալ կայր: Պատմի
եւ այսպիսի ինչ, պիղծ լէվէնաքս այս
գուժարեալ ի գիւղն Բոզնիք եւ խորհուրդ
արտեալ խախտուսին զմիմեանս գաւ
միաբանութեամբ եւ անկանիւր ի վերայ
Սրբոյ Վանիցս եւ աւարի առեալ զառ եւ
հեծեալ յերկրվար ի մէջ գիշերի գան
խմորվին հուպ մենաստանիս՝ կէտ մղոնա-
չափ հեռի ի սմանէ՛ յորում արաւուրօք
տեսանին ի վերայ պարսպին շուրջանակի
բազմաթիւն դրօշից եւ անհամար զօրս
սպառազինեալս խիտ առ խիտ եւ զամբարո
հրոյ ճառագայթեալ, ուստի զանդիտեալ
չ՛կարեն հպիլ, այլ դեգերէին այսր եւ
անգր մինչեւ ցառաւօս եւ այն տեղի

մնաց այնպէս. վասն որոյ 'ի հետեւստ անտի երթեկէս առնեն արնթաց երիվա-
րաւ իբրեւ զնոխամորտիկ խաղս պատե-
րազմի, և տեսուչ Սրբոյ Մենաստանիս
կարապետ Արքեպս. և միաբանք տմանք՝
անդիտակից սքանչելեացն դէտ կային
ընդ պարիսպն եթէ զի՞ է զի երթեկէս
առնեն արնթաց, երիվարաւ, և ապա
պիղծ լէվէնաքն կորագլուխ դառնան 'ի
տեղիս իւրեանց և հիացմամբ պտտմեն թէ
զիմորդ սեւազլուխն յանակնկալ պահու
այնչափ բազմութիւն զօրաց գումարնաց
'ի վանս իւր և որպէն հոգայ զպիտոյս
նոցա: Եւ երջանիկ լուր այսը հրաշից
տարածեալ ընդ ամենայն նահանգս և տ-
մենեքին քրիստոնեայք և այլազգիք
սքանչացեալ հիացմամբ փոռս վեր առա-
քէին հրաշագործողին զփրկութիւն Սրբոյ
Մենաստանիս (ՌՄԷ = 1758): Յաւուրս
յայտատիկ եկն հրաման յԱրքայէ տա Ֆէյ-
զուլլահ նախարար Սեբաստիոյ՝ կոտորել
զլէվէնտս և նա թէպէտ մանուկ հասակաւ
և անբնակի պատեւրազմի, այլ իբր 500
զօրօք ել և յանակնկալ պահու հասեալ 'ի
վերայ նոցա կոտորեաց զամենեանն զնո-
սա, մինչև սակաւք՝ ի նոցանէ մազապուրծ
փոխատական եղեն և զգլուխ սպանելոցն
առաքեաց տա Արքայն և տեսեալ Արքա-
յին զքաջութիւն նորին՝ ուրախ եղ և յոյժ
և շնորհեաց նմա բարձրութիւն իշխանու-
թեան: Յաջորդ ամին (ՌՄԷ = 1759) չի-
նեցան ծաղկեալ քարինք Ս. Բեմի Ս. Ա-

նապատի վանուց՝ ի ձեռն Յարութիւն
Վրդպտ. ի Երիզացուոյ՝ որ էր միաբան
Սրբոյ Նշանիս և հրամանաւ կարապետ
Արքեպս. ի էր տեսուչ Անապատի վանուց
և որ արար զպատմութիւնս՝ սկսեալ 'ի
մահուանէ Ածատուր Արքեպս. թմփուկ
կոչեցելոյ մինչ ցվաղճան իւր. և հասեալ
յաւուրս ծերութեան հասգեաւ 'ի Քս. և
թաղեցաւ 'ի գաւթի Ս. Անապատի 'ի հիւ-
սիսակողմն դրան Տաճարին: Յայսմ ամի
վճարեալ զտմանակս իւր փոխեցաւ և
յանանց կեանս Ածատուր վարդապետ, Ա-
ռաջնորդն Ս. Հրեշտակապետի և մնաց
Ս. Մենաստանն առանց Առաջնորդի իբրեւ
ամս երիւ, և ապա Յովհաննէս Վարդա-
պետ Սեբաստացի՝ Միաբան Ս. Երուսա-
ղէմի առեալ զՏեսչութիւն նոյն վանուց
'ի Յակոբ Գառիբարքէ, եկն 'ի Սեբաս-
տիա՝ նստաւ Առաջնորդ 'ի վանս Ս.
Հրեշտակապետի, ՌՄԺԶ = 1767 Տօմար:
Յետ երկուց տմաց գնացին զօրք Քաղա-
քիս 'ի պատերազմ ընդդէմ Ռուսաց և
բազում չարիս գործեցին և վիշտս հա-
սուցին Ազգիս մերոյ: Եւ կեցեալ յԱռաջ-
նորդութեան վիճակիս Սեբաստիոյ կարա-
պետ Եպս. ի Ակնեցույ ամս իբրեւ 20 և
ժամանեալ յաւուրս ծերութեան փոխեցաւ
տա Քրիստոս և հղաւ 'ի տապանի 'ի վանս
Սրբոյ Նշանի 'ի գաւթի անդ Մեծի Եկե-
ղեցւոյն հուպ Առաքել և Եղիազար Արհի-
եպիսկոպոսաց 'ի 29 Յունվարի ՌՄԻԳ =
1774:

(Շաբուկակիի՝ 10)

ՏԻՐԻՐԱՆ Ս. ԳԻՐԻՇԵԱՆ

